

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԶՐԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ, ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունվարի 2009 թվականի N 33-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ, ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել՝

1) ջրային ոլորտի հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրի իրականացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների փուլային ծրագրի պարբերաբար թարմացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ջրային ոլորտի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ փուլային ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

2009 թ. հունվարի 15  
Երևան

S. Սարգսյան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2009 թվականի  
հունվարի 8-ի N 33-Ն որոշման

### Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ, ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԹԱՐՄԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտի հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրի (այսուհետ՝

ծրագիր) իրականացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) պարբերաբար թարմացման կարգը:

2. Ծրագրի թարմացման անհրաժեշտությունը բխում է ջրային ոլորտում ծագած նոր հիմնախնդիրների լուծման և (կամ) իրականացված միջոցառումների շարունակական կատարման ապահովման պահանջից:

3. Թարմացման անհրաժեշտությունը գնահատում է միջոցառման իրականացման համար պատասխանատու կամ դրա իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական լիազոր մարմինը, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ ելնելով տվյալ մարմնի կանոնադրությամբ ամրագրված գործառնություններից:

4. Միջոցառումների իրականացման նախնական փուլ է համարվում միջոցառման տեխնիկական առաջադրանքի մշակման, մրցույթի հայտարարման և ընդհանուր տեղեկության հավաքագրման փուլը:

5. Միջոցառումների ծրագիրը թարմացվում է, եթե նախորդ միջոցառման իրականացումից հետո պետական լիազոր մարմնի կողմից գնահատման արդյունքում հայտնաբերվում են հիմնախնդիրներ, որոնք հնարավոր չի եղել լուծել նախկինում նախատեսված միջոցառումներով կամ դրա իրականացման ժամանակ ի հայտ են եկել այլ հարակից խնդիրներ:

6. Լրացուցիչ միջոցառումների իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացվում են՝ ելնելով միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային հայտերի քննարկման արդյունքներից:

7. Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման հայտը և տեխնիկական առաջադրանքը ներկայացնում է միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական լիազոր մարմինը՝ յուրաքանչյուր տարվա բյուջետային ֆինանսավորման հայտում ներառելով մանրամասն տեղեկատվություն նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի մասին (ավարտված և ընթացքում գտնվող), ինչպես նաև միջոցառումների չավարտման և չկատարման հիմնավորումները:

8. Ջրի ազգային ծրագրի կարճաժամկետ միջոցառումներին առնչվող տարեկան ծրագրերը Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝ ելնելով տվյալ տարվա միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային հայտերի քննարկման արդյունքներից:

9. Միջոցառումների ծրագիրը թարմացվում է յուրաքանչյուր 6 տարին մեկ անգամ, եթե անհրաժեշտություն չի առաջանում ավելի շուտ թարմացման համար:

10. Միջոցառումների մշակման և իրականացման համար իրավասու պետական լիազոր մարմինը դրանք մշակելիս որոշում է դրանց փուլայնությունը՝ կարճաժամկետ՝ միջնաժամկետ և երկարաժամկետ՝ ելնելով դրանց լուծման հրատապությունից և իրականացման նախապայմաններից:

11. Փուլայնությունը որոշելիս՝ պետական լիազոր մարմինը մշակում է հաջորդ փուլային միջոցառումների իրականացման վերաբերյալ ծրագիր:

12. Միջոցառումը չի կարող անցնել փուլային իրականացման հաջորդ փուլ կամ թարմացվել (միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով), եթե նախորդն իրականացված չէ կամ էլ թերի է իրականացված:

13. Միջոցառումների իրականացումը գնահատվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դրանց կատարման նպատակով կնքված գնման պայմանագրերով աշխատանքների ընդունման համար սահմանված ընթացակարգերով:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2009 թվականի  
հունվարի 8-ի N 33-Ն որոշման

**ԶՐԱՅԻՆ ՈՒՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ, ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ**

**ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ**

Հիմնախնդիրները	Կարճաժամկետ միջոցառումները	Կատարման ժամկետը	Միջնաժամկետ միջոցառումները	Կատարման ժամկետը	Երկարաժամկետ միջոցառումները	Կատարման ժամկետը	Պատասխանատուները
1	2	3	4	5	6	7	8
Օրենսդրական հիմքերի ներդաշնակեցում, համալրում և բարելավում	1) առկա օրենսդրական դաշտի ներդաշնակեցում և կատարելագործում՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 121րդ հոդվածի իրականացման վերլուծությունը և դրանով նախատեսված գործառնությունների իրականացումը 2) իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթացում ջրի ազգային խորհրդի կազմում դրանց քննարկումներն ապահովող մշտական գործող միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում	2010 թ. նոյեմբեր	բոլոր օրենքների և այլ իրավական ակտերի միասնա կանությունը երաշխավորելու նպատակով միջնորդող մեխանիզմի կողմից ցանկացած նոր օրենքների և իրավական ակտերի նախագծերի վերանայում	2015 թ. դեկտեմբեր	բոլոր օրենքների և այլ իրավական ակտերի միասնականության շարունակական պահպանում	2021 թ. դեկտեմբեր	ՀՀ բնապահպանության նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման նախարարություն  ՀՀ առողջապահության նախարարություն  ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում	3) ինստիտուցիոնալ և իրավական զննհատումների արդյունքում բացահայտված կրկնվող և բացակայող իրավատուությունների և պատասխանատվությունների վերաբերյալ մշակված առաջարկությունների վերանայում և իրականացում	2010 թ. դեկտեմբեր	ինստիտուցիոնալ բարեփոխման գործընթացի շարունակում՝ պատշաճ ուշադրություն դարձնելով ջրային ռեսուրսների վերածևավորված մոնիթորինգային և վերահսկման ծրագրերից բխող առաջարկություններին	2015 թ. դեկտեմբեր	ինստիտուցիոնալ բարեփոխման գործընթացի շարունակական ապահովում	2021 թ. դեկտեմբեր	ՀՀ բնապահպանության նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման նախարարություն  ՀՀ առողջապահության նախարարություն
Շահագրգիռ մարմինների միջև համագործակցության և համակարգման բարելավում	4) ջրի ազգային խորհրդի կողմից միջգերատեսչական համագործակցության և համակարգման մեխանիզմների հստակեցում և բարելավում	2010 թ. դեկտեմբեր					ՀՀ բնապահպանության նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման նախարարություն  ՀՀ առողջապահության նախարարություն
Ջրավազա նային կառավարման մարմինների գաղափար	5) ջրավազանային կառավարման մարմինների ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրի մշակում	2010 թ. նոյեմբեր	ջրավազանային կառավարման մարմինների ջրային ռեսուրսների համապարփակ պլանավորման և կառավարման հնտությունների գաղափար	2015 թ. դեկտեմբեր	ավազանային կառավարման հինգ տարածքներում ջրավազանային կառավարման մարմինների ի հառոտությունների	2021 թ. դեկտեմբեր	ՀՀ բնապահպանության նախարարություն

<p>Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակում</p>	<p>6) մեկ ավազանային կառավարման տարածքի համար մոնիթորինգի համակարգի պիլոտային ծրագրի մշակում և փորձարկում 7) մոնիթորինգի ռազմավարության և ազգային ծրագրի մշակում, մոնիթորինգի ծառայությունների տարածքային ստորաբաժանումների տեխնիկական հզորացում, կարիքների գնահատում, կառուցվածքային բարեփոխումներ և տեխնիկական վերազինում, տվյալների էլեկտրոնային փոխանակման տարբերակի ստեղծում 8) Հայաստանում ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի համակարգի վերականգնում</p>	<p>2010 թ. դեկտեմբեր</p>	<p>մոնիթորինգի ռազմավարության և ազգային ծրագրի իրականացում  մյուս չորս ավազանային կառավարման տարածքների մոնիթորինգի համակարգերի և ծրագրերի մշակում և փորձարկում՝ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պահանջների համաձայն</p>	<p>2015 թ. հոկտեմբեր</p>	<p>ընդլայնում հանրապետական և հինգ ավազանային կառավարման տարածքների մակարդակում մոնիթորինգի գործող համակարգերի գնահատում և հետագա բարելավում</p>	<p>2021 թ. նոյեմբեր</p>	<p>&lt;&lt; բնապահպանության նախարարություն  &lt;&lt; արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
<p>Ջրօգտագործման իրավունքի ինստիտուտի կատարելագործում</p>	<p>9) ջրօգտագործման թույլտվությունների առկա կանոնակարգերի կատարելագործում, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների հայտերի գերակայությունների գնահատման չափորոշիչների սահմանում 10) շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող ջրօգտագործման դեպքում ջրօգտագործման թույլտվության հայտերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում</p>	<p>2009 թ. դեկտեմբեր</p>	<p>ջրօգտագործման թույլտվությունների ընթացակարգի շարունակական բարելավում՝ ներառյալ հասարակության ծանուցման ու բողոքարկման մեխանիզմները  արդյունավետ և նպատակային ջրօգտագործմանը նպատակաուղղված իրավական կառուցվածքային, ինչպես նաև արտոնություններ տալու և (կամ) դրանք սահմանափակելու ու տնտեսական լծակների ներդրման ծրագրի մշակում  ջրօգտագործման և ջրահեռացման ազդեցությունների գնահատման և</p>	<p>2015 թ. հոկտեմբեր</p>	<p>ջրի ազգային խորհրդի վեճերը լուծող հանձնաժողովի դերի ամրապնդմանն ուղղված մեխանիզմների մշակում</p>	<p>2021 թ. հունիս</p>	<p>&lt;&lt; բնապահպանության նախարարություն  &lt;&lt; առողջապահության նախարարություն</p>

			վերլուծության ունակությունների շարունակական զարգացում				
Պետական ջրային կադաստրի վարման ինստիտուտի կատարելագործում	11) ջրային պետական կադաստրի կարճաժամկետ ծրագրի մշակում և իրականացում՝ ներառյալ ջրային ռեսուրսների կողավորման համակարգի մշակումը և ներդրումը, պետական ջրային կադաստրի վարման արդի մեխանիզմների ստեղծումը և ներդրումը, ինչպես նաև ջրային ռեսուրսների կողա- վորման համակարգի մշակումը և ջրային ռեսուրսների կողավորումը	2010 թ. հոկտեմբեր	ջրային պետական կադաստրի միջնաժամկետ ծրագրի մշակում և ստեղծակալական համակարգի շարունակական բարելավում  ջրային բնագավառին վերաբերող տվյալների բազայի կառավարման մեխանիզմի կատարելագործում  ըստ ջրավազանային տարածքների տվյալների՝ բազայի ստեղծում  տվյալների փոխանակման էլեկտրոնային տարբերակի ստեղծում և հետագայում արդյունավետ շահագործման համար պայմանների ապահովում	2015 թ. դեկտեմբեր	սահմանված երկարաժամկետ նպատակին հասնելու ուղղությամբ կադաստրի իտազա զարգացում՝ ներառյալ պատասխանատվություն- ների փոխանցումը ջրավազանային կառավարման մարմիննե- րին, և կադաստրի օգտագործումը՝ ջրավազանային նակարդակում համապարփակ պլանավորման և կառավարման համար	2021 թ. դեկտեմբեր	<< բնապահպանության նախարարություն  << արտակարգ իրավիճակների նախարարություն  << էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
Ջրային ոլորտի կառավարման գործընթացում հասարակության իրազեկման և մասնակցության բարելավում	12) հանրապետական և ջրավազանային կառավարման տարածքների մակարդակներում ջրային ռեսուրսների պլանավորման և կառավարման վերաբերյալ հասարակության տեղեկատվության և մասնակցության ապահովում 13) ավազանային հասարակական խորհուրդների զարգացման ռազմավարության մշակում և իրականացում, ավազանային հասարակական խորհուրդների տեխնիկական իզդրացում	2010 թ. սեպտեմբեր	ավազանային մակարդակով ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակման, իրականացման և վերահսկման գործընթացներում շահագրգիռ կողմերի՝ ներառյալ ավազանային հասարակական խորհուրդների և հասարակության մասնակցությունն ապահովող ընթացակարգերի մշակումը և իրագործումը	2015 թ. հոկտեմբեր			<< բնապահպանության նախարարություն  << տարածքային կառավարման նախարարություն
Ջրի ազգային ծրագրի իրականացում և վերահսկողություն	14) << ջրի ազգային ծրագրի իրականացման և թարմացման շարունակական մոնիթորինգի և գնահատման իրականացում 15) ծրագրի հրահանգման	2010 թ. դեկտեմբեր	շարունակական իրականացում և վերահսկողություն	2015 թ. դեկտեմբեր	շարունակական իրականացում և վերահսկողություն	2021 թ. դեկտեմբեր	<< բնապահպանության նախարարություն  << տարածքային կառավարման

	վերահսկողության համակարգի ստեղծում						նախարարություն
Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակում	16) ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունում և ջրավազանային կառավարման մարմիններում՝ հզորությունների ստեղծում՝ ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման համար 17) մեկ ավազանային կառավարման տարածքի համար պիլոտային ջրավազանային կառավարման պլանի մշակում և տեղեկատվական կարիքների բացահայտում	2010 թ. նոյեմբեր	մանատիպ ջրավազանային կառավարման պլանների մշակում՝ մնացած չորս ավազանային կառավարման տարածքների համար	2015 թ. դեկտեմբեր	հինգ ավազանային կառավարման տարածքների համար ջրավազանային կառավարման պլանների պարբերաբար թարմացում և շարունակական իրականացում	2021 թ. դեկտեմբեր	<< բնապահպանության նախարարություն
Սևանա լճի գործողությունների պլանի իրականացում	18) Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրի վերանայում և բարելավում	2010 թ. դեկտեմբեր	Սևանա լճի գործողությունների պլանի իրականացում՝ հատուկ միջգերատեսչական հանձնախմբի կողմից	2015 թ. դեկտեմբեր	Սևանա լճի գործողությունների պլանի իրականացման շարունակում  պլանի իրականացման արդյունավետությունը երաշխավորելու նպատակով Սևանա լճի վրա պլանի իրագործման ազդեցության մոնիթորինգ և գնահատում	2021 թ. դեկտեմբեր	<< բնապահպանության նախարարություն  << տարածքային կառավարման նախարարություն
Ջրային ռեսուրսների և ջրային պաշարի բաղադրիչների գնահատում	19) ջրային ռեսուրսների և ջրային պաշարի բաղադրիչների արդիական բնութագրերի ձգձգում՝  ա. մակերևութային բնական վերականգնվող հոսքի քանակական և որակական տարածաժամանակային բնութագրերի ձգձգում՝ հաշվի առնելով վերջին 4 տասնամյակի ընթացքում կուտակված քանակական և որակական մոնիթորինգի տվյալները, հոսքի վրա կլիմայի փոփոխության և անթրոպոգեն ազդեցությունները  բ. մակերևութային և ստորերևույթային	2010 թ. դեկտեմբեր	մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակական և որակական բնութագրերի համալրում ջրավազանային կառավարման պլաններում	2015 թ. դեկտեմբեր			<< բնապահպանության նախարարություն  << արտակարգ իրավիճակների նախարարություն  << առողջապահության նախարարություն

	<p>ջրային պաշարների տարանջատված գնահատման հստակեցում, խորքային հոսքի ճշգրտում</p> <p>գ. հիմնական գետերի նվազագույն էկոլոգիական թողքի որոշման մեթոդների մշակում և հաշվարկ</p> <p>դ. ստորերկրյա ջրային ռեսուրսների հանքավայրերի շահագործական պաշարների ճշգրտում և թույլատրելի (հնարավոր) ջրառի տեղաբաշխման որոշում</p> <p>ե. խմելու տնտեսական նպատակով օգտագործման ենթակա կամ օգտագործվող ստորգետնյա ջրաղբյուրների սանիտարական պահպանման 2րդ և 3րդ գոտիների նախագծերի կազմում</p>						
Ջրի որակի ապահովման նորմերի սահմանում և իրականացում	<p>20) ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի սահմանման միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության համապատասխանեցում և ներդրում՝ հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված մոտեցումները</p>	<p>2009 թ. դեկտեմբեր</p>	<p>ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի մշակում և ընդունում</p> <p>ավազանային կառավարման տարածքների մակարդակով ջրի որակի ապահովման նորմերի տեղայնացման հնարավորությունների ուսումնասիրում</p>	<p>2015 թ. նոյեմբեր</p>	<p>ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի իրավակիրարկում</p> <p>ավազանային կառավարման տարածքների մակարդակով ջրի որակի ապահովման նորմերի ընդունում</p>	<p>2021 թ. դեկտեմբեր</p>	<p>«Քննապահպանության նախարարություն</p> <p>«Ք կոնոմիկայի նախարարություն</p> <p>«Ք առողջապահության նախարարություն</p>
Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում	<p>21) ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանման մեթոդաբանության մշակում՝ ներառյալ հոսքի ձևավորման գոտիները, ստորերկրյա ջրերի պահպանման գոտիները, ջրապահպան գոտիները, էկոտոնը, ջրային ավազանում առտակնագ</p>	<p>2010 թ. նոյեմբեր</p>	<p>ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում՝ համաձայն մշակված մեթոդաբանության, քարտեզագրում և պահպանում</p>	<p>2015 թ. դեկտեմբեր</p>	<p>ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների մոնիթորինգ</p>	<p>2021 թ. հոկտեմբեր</p>	<p>«Քննապահպանության նախարարություն</p> <p>«Ք տարածքային կառավարման նախարարություն</p>

	Էկոլոգիական իրավիճակի և Էկոլոգիական աղետի գոտիները, անօտարելի գոտիները						
Արարատյան դաշտի նախկինում չորացվող գյուղատնտեսական հողերի կարգավիճակի ուսումնասիրություն	22) Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի օգտագործման ծրագրերի մշակում և իրականացում	2010 թ. նոյեմբեր	Արարատյան դաշտի նախկինում չորացվող գյուղատնտեսական հողերի օգտագործման ծրագրերի իրականացում	2015 թ. դեկտեմբեր	նախածեռնվող միջոցառումների ազդեցության մոնիթորինգ և գնահատում	2021 թ. նոյեմբեր	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
Ջրերի ռազմավարական պաշարների ավելացում և գետային հոսքի կարգավորում	23) ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգով նախատեսված աշխատանքների իրականացում	2010 թ. դեկտեմբեր	ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգով նախատեսված աշխատանքների իրականացման շարունակություն	2015 թ. դեկտեմբեր	ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգով նախատեսված աշխատանքների իրականացման շարունակություն	2021 թ. դեկտեմբեր	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Ջրերի որակի կառավարման իրականացում	24) ջրերի որակի կառավարման ռազմավարության մշակում	2010 թ. դեկտեմբեր	ջրերի որակի կառավարման ռազմավարության իրականացում	2015 թ. դեկտեմբեր	ջրերի որակի կառավարման ռազմավարության մոնիթորինգ և հետագա բարելավում	2021 թ. դեկտեմբեր	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն
Տարածքային պլանավորման չափանիշների և ուղեցույցների սահմանում	25) տարածքային պլանավորման ներկա մոտեցումների վերանայում և բարելավում	2010 թ. դեկտեմբեր	ազգային և տարածաշրջանային մակարդակներում իրականացվող տարածական, ջրային ռեսուրսների և բնապահպանական պլանավորման գործընթացների ներդաշնակեցում	2015 թ. դեկտեմբեր	ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների պահպանմանն ուղղված կարգավորող և վերահսկող միջոցառումների շարունակական իրականացում	2021 թ. դեկտեմբեր	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարում	26) անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագրի մշակում	2010 թ. դեկտեմբեր	Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագրի իրականացում	2015 թ. դեկտեմբեր			ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	27) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների (խմելու, կենցաղային ջրի մատակարարում, ոռոգում) իրականացման ուսումնասիրություն և դրանց բարելավմանն ուղղված	2010 թ. դեկտեմբեր	ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների իրականացման նկատմամբ արդյունավետ վերահսկման մեխանիզմների մշակում և ներդրում	2015 թ. դեկտեմբեր	ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների շարունակական զարգացում և բարելավում	2021 թ. դեկտեմբեր	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն



	ծրագրերի մշակում և վիճակի ուսումնասիրություն						<< առողջապահության նախարարություն
Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովում	28) հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում  29) պետական նշանակության հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործման և պահպանության համար պատասխանատուների հստակեցում	2010 թ. դեկտեմբեր	հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում	2015 թ. դեկտեմբեր	հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման մոնիթորինգ և բարելավում	2021 թ. դեկտեմբեր	<< տարածքային կառավարման նախարարություն  << էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն  (ըստ պատկանելության)

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**